ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 5 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

«ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՁԵՌՆԱՐԿԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐՈՒՄ

Սույն թվի ապրիլի 1-ին և 8-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Փիլիսոփայության սեկտորում կայացավ խորհրդակցություն նվիրված նոր հրատարակվելիք «Փիլիսոփայության պատմության» դասագրքի նախագծի քննարկմանը։

Բաց անելով խորհրդակցությունը, Փիլիսոփայության սեկտորի վարիչ Խ. Սոմջյանը նշեց ձեռնարկվելիք աշխատանքի առանձնահատուկ նշանակությունն ու կարևորությունը և կոչ արեց ակտիվ մասնակցություն ցուցաբերել փիլիսոփայության պատմության դասագրքի նախագծի քննարկմանը և կոնկրետ դիտողություններով օգնել հեղինակներին՝ փիլիսոփայության պատմության մարքսիստական լիարժեք դասագիրք ստեղծելու գործում։

Փիլիսոփայության պատմության դասագրքի նախագծի տարբեր բաժիններին նվիրված քննադատական ելույթներով հանդես եկան փիլիսոփայական գիտությունների դոկտորներ Վ. Չալոյանը և Հ. Գարրիելյանը, փիլիսոփայական գիտությունների թեկնածուներ Մ. Պետրոսյանը, Գ. Վարդանյանը, Գ. Աղաջանյանը և Խ. Մոմջյանը։

Վ. Չալոյանը առաջարկեց որոշ չափով ընդարձակել դրքի՝ հին-հունական փիլիսոփայությանը նվիրվելիք բաժինը և մի առանձին գլուխ նվիրել հելլենիստական շրջանի փիլիսոփայության զարգացմանը, քանի որ վերջինս փիլիսոփայության զարգացման պատմության մեջ ներկայացնում է որակական տեսակետից մի նոր էտապ։ Ինչ վերաբերում է հռոմեական փիլիսոփայությանը, Չալոյանի կարծիքով այն պետք է ներկայացվի իբրև հելլենիստական փիլիսոփայության տարածումը՝ հռոմեական կայսրության մեջ։

Չալոյանի այս տեսակետը խիստ քննադատության ենթարկվեց ելույթ ունեցողների կողմից։

Իր ելույթում Վ. Չալոյանը նաև նշեց, որ նպատակահարմար է ֆեոդալական դարաշրջանի փիլիսոփայության պատմության շարադրումն սկսել Արևելքի ֆեոդալական փիլիսոփայությունից։ Չպետք է վաղ պատրիստիկայի փիլիսոփայությունը մտցնել ֆեոդալական շրջանի փիլիսոփայության մեջ (ինչպես այդ արված է դասագրքի նախագծում), քանի որ վաղ պատրիստիկայի փիլիսոփայությունը հանդիսանում է ստրկատիրական հասարակակարգին հատուկ մի երևույթ։ Չալոյանի կարծիքով անընդունելի է նաև նախագծում արտահայտված այն տեսակետը, թե նեոպլատոնիզմը հռոմեական փիլիսոփայական ուսմունք է. նեոպլատոնիզմը հանդիսանում է հելլենիստական ուսմունք։ Վ. Չալոյանի կարծիքով բյուզանդական փիլիսոփայության սկիզբը պետք է համարել ոչ թե 9-րդ դարը, ինչպես այդ նշված է դասագրքի նախագծի մեջ, այլ 8-րդ դարի առաջին կեսը, երբ ապրում և ստեղծագործում էր Իոան Դամասկինը։ Վ. Չալոյանը ափսոսանք հայտնեց այն բանի համար, որ նախագծի մեջ տեղ չեն գտել Ադրբեջանի՝ 8—10-րդ դարերի փիլիսոփայությունը, ամբողջ հրեական փիլիսոփայությունը, որը՝ նրա կարծիքով, զգալի դեր է խաղացել Արևելքի փիլիսոփայական միտքը լատինական աշխարհին հաղորդելու գործում, ինչպես նաև 16—18-րդ դարերի հայկական ու վրացական փիլիսոփայությունը։ Վ. Չալոյանն առաջարկեց որոշ չափով ընդարձակել ֆեոդալական դարաշրջանի փիլիսոփայության պատմությանը նվիրված գլուխները, նկատի ունենալով այն, որ այդ գլուխների մեջ մտցվում է Կիևյան Ռուսիայի, Չեխիայի, Բուլղարիայի, Հայաստանի, Վրաստանի, Միջին Ասիայի ժողովուրդների փիլիսոփայությունը։

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր պրոֆ. Հ. Գարրիելյանը նշեց, որ դասագրքի երկրորդ մասը նախագծում ներկայացված է իբրև դիալեկտիկական մատերիալիզմի դասընթաց, և ոչ իբրև փիլիսոփայության պատմություն, և որ գրքի այդ մասում պետք է շարադրել միայն մարքս-լենինյան փիլիսոփայության կատեգորիաների լինելիության պատմությունը, մնա-

ցուցը թողնելով դիամատին, քանի որ դիրքը գրվում է իբրև փիլիսոփայության պատմություն։

Խոսելով նախագծի՝ հայ փիլիսոփայության պատմությանը նվիրված գլուխների մասին, Հ. Գաբրիելյանը մատնանշեց, որ նախագծում հիշատակված են անցյալի հայ փիլիսոփաներից շատ քչերը. անհրաժեշտ է գրել նաև Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Դավիթ Անհաղթի, Սմբատ Զարեհվանցու, Հակոբիոսի, Հովհաննես Սարկավագի, Որոտնեցու, Տաթևացու, Սիմեոն Ջուղայեցու, Ներսես Մոկացու, Հովսեփ Էմինի, Հովհաննես քահանայի, ինչպես նաև արևմտահայ մտածողների մասին։ Լուրջ առարկություններ առաջացրեց պրոֆ. Գաբրիելյանի այն պնդումը, թե 19-րդ դարի հայ փիլիսոփայության պատմության մեջ կարիք չկա խոսելու Խաչատուր Աբովյանի մասին՝ իբրև փիլիսոփայի։

Խոսելով Արևելքի փիլիսոփայության մասին, Հ. Գաբրիելյանն ասաց, որ իր կարծիքով Արևելքի վերածննդի պատմությունը պետք է սկսել ոչ թե 12-րդ դարից, ինչպես հիշատակված է գրքի նախագծում, այլ 9-րդ դարից, թոնդրակյան շարժման ժամանակաշրջանից։ Պրոֆ. Գաբրիելյանի կարծիքով սխալ է Վ. Ջայոյանի այն տեսակետը, թե վաղ պատրիստիկայի փիլիսոփայությունը պետք է ուսումնասիրել ստրկատիրական հասարակակարգի փիլիսոփայության մեջ։ Վաղ պատրիստիկան, իբրև փիլիսոփայական ուսմունք, անպայման պետք է ուսումնասիրվի ֆեոդալիզմի դարաշրջանի փիլիսոփայության մեջ, թեպետ ժամանակագրական առումով նա ծագել է ստրկատիրական հասարակակարգում։

Այս տեսակետը պաշտպանեց նաև ընկ. Մ. Պետրոսյանը։ Մատնանշելով, որ սոցիալիստական իդեոլոգիան ևս ժամանակագրական տեսակետից ծագել է կապիտալիզմի շրջանակներում, Պետրոսյանը ասաց, որ միանգամայն անընդունելի կլիներ, եթե որևէ մեկը առաջարկեր այդ իդեոլոգիան ուսումնասիրել իբրև բուրժուական հասարակակարգի իդեոլոգիա։

Խոսելով քննարկվող նախագծի՝ հայ փիլիսոփայական մտքի զարգացմանը նվիրված բաժինների մասին, Մ. Պետրոսյանը մատնանշեց, որ չի կարելի այնպես պատկերացնել, որ այդ դրքում տեղ պիտի գտնի ամբողջ հայ փիլիսոփայությունը՝ իր բոլոր ներկայացուցիչներով կամ ամբողջ հայ հասարակական մտքի զարգացումը։ Մ. Պետրոսյանի կարծիքով պետք է խոսվի միայն այն հայ փիլիսոփաների կամ փիլիսոփայական ուսմունքների մասին, որոնք այս կամ այն չափով կապված են փիլիսոփայական մտքի զարգացման հետ քննարկելի։

Այնուհետև Մ. Պետրոսյանը մատնանշեց, որ գրքի նախագծում խիստ միակողմանիորեն է խոսվում Ֆոյերբախի մասին, ճիշտ չէ իբրև կողքի դնել Ֆոյերբախին, Բրունո-Բաուերին և Շտրաուսին, քանի որ դրանով անտեսվում է Ֆոյերբախի դերը մատերիալիզմի զարգացման պատմության մեջ։ Ֆոյերբախի մասին պետք է գրել միանգամայն պարզ և որոշակի, առանց իատնելու նրա հայացքները Բրունո-Բաուերի և Շտրաուսի հայացքներին, միաժամանակ ճիշտ որոշելով Ֆոյերբախի պատմական տեղը և ցույց տալով նրա սխալները։ Գրքի երկրորդ բաժնի մասին ընկ. Պետրոսյանն ասաց, որ հակառակ ընկեր Գաբրիելյանի, իր կարծիքով ճիշտ են վարվել հեղինակները, երբ այդ բաժնում խոսում են նաև դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքների մասին։

Իր ելույթում դոց. Գ. Վարդանյանը քննարկվող նախագծի դրական կողմերից մեկը համարեց այն, որ նախագծում մանրամասնորեն խոսվում է ռուսական փիլիսոփայության, ՍՍՌՄ ժողովուրդների փիլիսոփայության և Արևելքի փիլիսոփայության մասին, որ նախագծում լիովին հաշվի են առնված փիլիսոփայական դիսկուսիայի արդյունքները և ցույց է տրված փիլիսոփայության երկու հիմնական ուղղությունների՝ մատերիալիզմի ու իդեալիզմի դարավոր պայքարը։ Մի քանի կոնկրետ օրինակներով ցույց տալով, որ նախագծի ոչ բոլոր բաժիններում է անցկացվում պայքարի այդ գիծը, Վարդանյանը խոսեց նախագծի որոշ թերությունների մասին։ Վարդանյանի կարծիքով նախագծում լրիվ չի ներկայացված Արևելքի, մասնավորապես Հնդկաստանի ու Չինաստանի փիլիսոփայությունը, ցույց չի տրված իդեաների հարաբերական ինքնուրույնությունը, վատ է լուսաբանված դաղափարական փոխազդեցության հարցը։

Ռ. Աղայանյանը նախագծի դրական կողմը համարեց այն, որ կազմված է բոլշևիկյան պարտիականության ոգով, այնտեղ փիլիսոփայության պատմությունը տրված է դասակարգային պայքարի պատմության հիման վրա, որպես դասակարգային պայքարի իդեոլոգիական արտահայտություն։ Սակայն նա ևս մատնանշեց, որ ելնելով այդ ճիշտ սկզբունքից, հեղինակները սխալվել են ցույց չտալով իդեոլոգիայի հարաբերական ինքնուրույնությունը։ Աղայանյանը նախագծի թերություններից մեկն էլ համարեց այն, որ բավարար պարզորոշությամբ ցույց չի տրված դիալեկտիկական մեթոդի զարգացումը՝ մատերիալիզմի և իդեա-

լիզմի պայքարի ընթացքում։ Իբրև նախագծի մասնավոր թերություն Դ. Աղաջանյանը նշեց, որ այնտեղ չի խոսվում Արիստոտելի լոգիկայի մասին, անբավարար են տրված Դեկարտին և Սպինոզային նվիրված պարագրաֆները, բաց է թողնված ֆրանսիական ուտոպիստ-կոմունիստ Մորելլին, չի տրված իդեալիստական դիալեկտիկայի զարգացումը գերմանական փիլիսոփայության մեջ, ոչինչ չի ասված 16-րդ դարի գերմանական բուրժուական-ռեֆորմացիոն շարժումների դեկավարների մասին (Մյունցեր և ուրիշներ), բավարար չափով չի լուսաբանված դիալեկտիկական մտքի զարգացումը Ռուսաստանում Դերցենից մինչև Չերնիշևսկի և այլն։

Փիլիսոփայության սեկտորի վարիչ Խ. Մոմջյանը իր ելույթում մատնանշեց, որ ինչքան էլ քննադատելի ու առարկելի լինեն նախագծի առանձին հատվածները, այնուամենայնվի նախագիծը այն հիմքն է, որի վրա հնարավոր է կառուցել փիլիսոփայության պատմության Մարքսիստական-Լենինյան մի դասագիրք։ Նախագծի անժխտելի արժանիքներն են,— նրա պարտիականությունը, քաղաքական նպատակասլացությունը, «պրոֆեսորական ակադեմիզմից» բացակայությունը, խորթ ու թշնամի իդեաների նկատմամբ հաշտվողական վերաբերմունքի բացակայությունը։

Հրաժարվելով փիլիսոփայության պատմությունն իբրև գաղափարների ֆիլյացիա ներկայացնելուց, հեղինակները ձգտել են գրքի ամեն մի բաժնում ցույց տալ այն անթակտելի օրգանական կապը, որ գոյություն ունի փիլիսոփայական ուսմունքների և սոցիալ-տնտեսական, դասակարգային հարաբերությունների միջև, որոնց ծնունդ են հանդիսանում այդ փիլիսոփայական ուսմունքներն ու իդեաները։

Խ. Մոմջյանը նախագծի դրական կողմը համարեց նաև այն, որ նախագծում բավարար չափով խոսվում է արևելյան ժողովուրդների փիլիսոփայության մասին, որով հեղինակները վճռականորեն մերժել են արևմուտքը արևելքին հակադրելու բուրժուական ռեակցիոն փորձերը, մեծ տեղ է տրված ռուսական փիլիսոփայությանը, ՍՍՌՄ մյուս ժողովուրդների և նոր դեմոկրատիայի երկրների փիլիսոփայությանը։ Անշուշտ ողջունելի է նաև այն, որ մարքսիստական-լենինյան փիլիսոփայությունը տրված է ամբողջ ծավալով՝ իր ծագման պահից մինչև մեր օրերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախագծում հեղինակները բավարար չափով ուշադրություն են դարձրել ժամանակակից բուրժուական ռեակցիոն փիլիսոփայության և սոցիոլոգիայի դասակարգային բնույթի քննադատությանն ու նրանց մերկացմանը։

Խ. Մոմջյանը խոսեց նաև նախագծի մի շարք թերությունների մասին։ Նա մատնանշեց, որ հեղինակները որոշ չափով անտեսել են իդեոլոգիայի, տվյալ դեպքում փիլիսոփայության հարաբերական ինքնուրույնությունը, ցույց չտալով, օրինակ, թե հունական փիլիսոփայության զարգացման վրա ինչպիսի՞ ազդեցություն է ունեցել եգիպտական փիլիսոփայությունը, կամ՝ որն է հելլենիզմի դերը հռոմեական փիլիսոփայության ձևավորման գործում, ցույց չտալով այն կապը, որ գոյություն ունի, օրինակ, Սպինոզայի և Դեկարտի փիլիսոփայության միջև կամ 18-րդ դարի ֆրանսիական մատերիալիզմի և Լոկկի փիլիսոփայության միջև։ Հեղինակները ճիշտ են վարվել, երբ փիլիսոփայական սիստեմների և փիլիսոփայական գաղափարների ծագման ու զարգացման վճռական ֆակտորը համարել են տվյալ երկրի պատմական, սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնկրետ պայմանները։ Այդ է վճռականը, սակայն մարքսիզմը, ինչպես հայտնի է, ընդգծելով այդ, չի կարող բացասել այն իդեական փոխազդեցությունը, որ գոյություն ունի փիլիսոփայական տարբեր սիստեմների միջև։

Իբրև թերություն Խ. Մոմջյանը մատնանշեց նաև այն հանգամանքը, որ նախագծում չի զգացվում աթեիստական մարտնչող ոգին, որ իդեալիստական այս կամ այն ուղղության քննադատությունը հետևողականորեն չի զուգակցվում այդ իդեալիստական ուղղության և տերտերականության միջև եղած կապերի մերկացման հետ։ Այդ առանձնապես կարևոր է ներկայումս, երբ կրոնական կազմակերպությունները, և առաջին հերթին Վատիկանը, արտասահմանում կատաղի կամպանիա են ծավալել խաղաղության և իսկական դեմոկրատիայի դեմ, հանգեցնելով իբրև իմպերիալիստական էքսպանսիայի ու ռեակցիայի ամենամոլեռանդ պաշտպաններ։ Զգալի թերություն է նաև այն, որ նախագծի ոչ բոլոր մասերում է հետևողականորեն երևում մարքսիստական-լենինյան ճիշտ մոտեցումը անցյալի կուլտուրական ժառանգության, տվյալ դեպքում անցյալի փիլիսոփայության նկատմամբ։ Այդ տեսակետից նկատելի է, որ, օրինակ, գերմանական փիլիսոփայությանը նվիրված բաժիններում հեղինակները չեն տեսել ոչ մի գրական երևույթ, մինչդեռ մարքս-լենինյան թեորիան պահանջում է դիֆերենցված մոտեցում ունենալ այս կամ այն ժողովրդի կուլտուրային, պահանջում է ամեն մի ազգային կուլ-

տուրայի մեջ տեսնել երկու կուլտուրա՝ ռեակցիոն և պրոգրեսիվ։

Ընկ. Մոմջյանը մատնանշեց նաև նախագծի մի շարք մասնակի թերություններ, ինչպես օրինակ, այն, որ անբավարար է տրված քրիստոնեությանը նիվրված բաժինը և անբավարար է բնութագրված քրիստոնեության էությունը, խիստ ընդգծված է Բյուզանդիայի ու Պարսկաստանի ազդեցությունը հայկական և վրացական փիլիսոփայական մտքի կազմավորման վրա և որոշ չափով անտեսված է այդ փիլիսոփայության ինքնուրույնությունը։

Փիլիսոփայության պատմության դասագրքի նախագծի քննարկման նյութերը ուղարկվում են Մոսկվա՝ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Փիլիսոփայության Ինստիտուտին։